«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջ

Հաստատված է
Տնօրինական խորհրդի նիստում
«29» 08 2019թ.
Արձանագրություն № 1.

Հաստատում եմ
«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի
Տնօրեն՝ Ի. Վարդանյան
«02» 09 2019թ.

«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋԻ

ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆ 2019

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջ ՍՊԸ-ի (այսուհետ՝ Քոլեջ) աշխատակիցների, դասախոսական կազմի և ուսանողների էթիկայի կանոնակարգը (այսուհետ՝ Կանոնակարգ) ներքին նորմատիվ իրավական ակտ է, որը սահմանում է բարոյական, էթիկական սկզբունքները, կանոնները, նորմերը, վարքագծի կանոնները և գործնական հարաբերությունները Քոլեջում:

1.2 Կանոնկարգը ներդրվում է Քոլեջում գործունեություն իրականացնող աշխատակիցների, դասախոսական անձնակազմի և ուսանողների բարոյահոգեբանական, մանկավարժական, դաստիարակչական և կազմակերպչական հիմունքների զարգացման և ամրապնդման նպատակով, որը նպաստում է Քոլեջի ընդհանուր գործունեության և զարգացման հիմնական ծրագրերի աջակցությանն ու իրականացմանը:

1.3 Կանոնակարգով սահմանված պահանջները տարածվում են Քոլեջի ներքին շահակիցների վրա՝ անկախ զբաղեցրած պաշտոնից:

II. ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԿԱՆՈՆՆԵՐ

2.1. Քոլեջի աշխատակիցները պարտավոր են պահպանել էթիկայի հետևյալ կանոնները.

- հարգել ՀՀ պետական լեզուն, ինչպես նաև պետական խորհրդանիշները,
- Քոլեջի աշխատողների հետ փոխհարաբերություններում լինել հարգալից, շրջահայաց, արդարամիտ և պահպանել ենթակարգությունը,
- իր գործողություններով կամ անգործությամբ չվարկաբեկել Քոլեջի հեղինակությունը,
- հարգել գործընկերների մասնագիտական կարծիքը,
- չքննադատել գործընկերներին այլոց ներկայությամբ. խնդրի առաջացման դեպքում պարզաբանումներ մտցնել՝ վերջինիս ներկայությամբ,
- չտարածել աշխատանքային պարտականությունների կատարման ընթացքում իրենց հայտնի դարձած տեղեկությունները՝ դրանք օգտագործելու միջոցով,
- աշխատավայրում չծխել,
- բարեխղճորեն վերաբերել գործատուի և գործընկերների գույքին,
- պահպանել բարոյական նորմերով սահմանված էթիկայի այլ կանոններ:

2.2. Քոլեջի աշխատակիցներին արգելվում է՝

- առանց գործատուի համաձայնության աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարումը գործընկերոջը վերահանձնարարելը,
- Քոլեջին սեփականության իրավունքով պատկանող գույքը փչացնելը կամ կորցնելը,
- գործընկերների նկատմամբ խտրականության դրսևորումը անկախ՝ սեռից, տարիքից, ազգային էթնիկական կամ սոցիալական ծագումից, ռասսայից, կրոնական դավանանքից կամ առողջական վիճակից և այլն,
- Քոլեջի ռազմավարական զարգացման ծրագրով սահմանված նպատակների ուսումնադաստիարակչական գործընթացների ներդրմանը և կատարմանը խոչընդոտելը:

III. ՔՈԼԵՋԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐՆ ԵՆ

- Հետևել վարքագծին, այդ թվում՝ պահպանել կարգապահությունը:
- Վարքագծի կանոնները չպահպանելու դեպքում կարող է նշանակվել կարգապահական տույժ:
- աշխատանքի նշանակումը, առաջխաղացումը և աշխատանքից ազատումը,
- հետազոտությունները, քննություններն ու գնահատականները,

IV. ՔՈԼԵՋԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՒՄ ԵՆ

- վարքագիծը, այդ թվում՝ կարգապահությունը և կարգապահական տույժերը,
- ակադեմիական բարեվարքությունը:

V. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ձևավորվել են ՀՀ օրենսդրության պահանջների, կրթության ոլորտում ինստիտուցիոնալ էթիկայի կանոնագրքի ուղեցույցի, Եվրոպական հանձնաժողովի Հետազոտողների եվրոպական խարտիայի և հետազոտողների հավաքագրման վարքագծի կանոնագրքի դրույթների հիման վրա: